ՍԵՐԳԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ-ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆԸ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ /ըստ այլազգի նարեկացիագետների/

Նարեկացու երկերը հարուստ իմաստային լիցքավորում, պես-պես հոգևոր շերտեր ու ուժագծեր ունենալով, և դա, հատկապես, ենթատեքստային իմաստով,- հիմք են տալիս դրանք զանազան ձևերով ընթերցել-մեկնաբանել ինչպես և, փաստացի, ընթերցվել – մեկնաբանվել է: Սակայն, եթե թույլ տրվի դրանք երկակիության սկզբունքով ընդհանրացնել, կարելի է ասել, որ մինչ այժմ հայ նարեկացիագիտության մեջ դիտվել է երկու միմյանց հակադիր ընթերցանություն-մեկնաբանություններ կրոնա-եկեղեցական /միջնադարյան մեկնիչներ, Ն.Նալյան, Գ.Ավետիքյան, Գ.Զարբանհալյան և ուրիշներ/ և ազգային-հեթանոսական[1] /Մ.Աբեղյան, Ա.Չոպանյան, Լ.Շանթ, Վաչե Նալբանդյան, Գառնիկ Անանյան և այլոք/: Կարծում ենք Նարեկացու երկերի երկրորդ կարգի ընթերցանություն-մեկնաբանությունն իսկությանն ավելի մոտ է: Այդ մասին է վկայում այն փաստը, որ օտար աչքը, այլազգի նարեկացիագետը հայ հանճարի երկերը ընթերցում-մեկնաբանում է ավելի շատ երկրորդի հանգվույն, քան առաջինի: Ահա և իմ այդ կարծիքը անուղղակիորեն փաստելու, և, դրանով իսկ, վերջին ժամանակներս /հատկապես Նարեկացու մահվան 1000-ամյակի "կապակցությամբ"/ վերստին աշխուժացած առաջին կարգի ընթերցանություն-մեկնաբանությունների, Նարեկացուն կրկին ու կրկին կրոնավորի զգեստ հագցնելու մոլար ընթացքը ինչ-որ տեղ մեղմելու համար,-վերստին արծարծեմ այլազգի նարեկացիագետների կարծիքները հայ հանճարի երկերի ազգային /հեթանոսական/ հենքի վերաբերյալ:

Նարեկացու երկերի հեթանոսական ատաղձը արդեն իսկ նկատել է առաջին այլազգի հետազոտողը հայ մշակույթի ռուս մեծ բարեկամ Վալերի Բրյուսովը: Հայ մշակույթի ականավոր գիտակը հայ հանճարին ընկալում է որպես մշակութաստեղծ նոր ո՛չ կրոնական սկզբունքների հիմնադիր, իսկ նրա

[1] «Ազգային»-ն ու «հեթանոսական»-ը, ըստ էության, նույնակարգ բառ-հասկացություններ են. հիշենք, որ «հեթանոս»-ը հայերեն է թափանցել հունարենից, որտեղ այն /հունական տարբերակով «էթնոսը»/ պարզապես նշանակում է ազգ /ցեղ/

ստեղծագործությունը՝ միջնադարյան հայ աշխարհիկ-ազգային պոեզիայի կենսալից նախասկիզբ: Նրա բնորոշմամբ, Նարեկացու քերթվածքներում «կրոնական զգացմունքը միանում է իսկական բանաստեղծական ներշնչանքին», որի հետևանքով՝ նրա «շատ այլաբանական հիմներ մնում են որպես հրաշալի ստեղծագործություններ՝ անկախ հոգևոր աստվածաբանական մեկնաբանություններից»[2]/ընդգծ. իմն է,-Ս.Մ./: Սկանավոր գրող-գրականագետը նրբամտորեն նկատում է հայ հանճարի երկերի այլաբանական կողմը, դրանցում արտահայտված կրոնա-աստվածաբանական թեմատիկայի թվացյալ, գուցե և որպես պարտադրանքի արտահայտություն, լինելը: «Նարեկացին իր երկերում աստվածաշնչյան թեմաները «ալեգորիկ մակնաբանության» ենթարկելու հարկադրանքն ունենալով,- գրում է նա,- ակնկալում է, որ ընթերցողի կողմից էլ իր ասածները նույնպես՝ «այլաբանորեն ըմբռնվելու» նրբամտությունը կապահովվի[3]: Հիրավի, Վ.Բրյուսովի հայտնած այս նկատառումը շատ էական է Նարեկացուն իսկատիպորեն ըմբռնել-հասկանալու համար:

Ի ուրախություն պետք է ասել, որ ռուս գրականագիտության մեջ Նարեկացու երկերի մեկնաբանության Վալերի Բրյուսովի հիմնած, ճշմարիտ ուղին հետագայում շարունակեցին նաև խորհրդային նարեկացիագետները:

Նարեկացու երկերի արդեն մերօրյա հոտազոտողը՝ Ստանիսլավ Ռասսադինը նրբորեն նկատում է, որ բանաստեղծը «իր աստվածն ունի» /իսկ սա, ինչպես հայտնի է, հեթանոսական աստվածընկալման կարևոր տարբերիչ գծերից մեկն է,-Ս.Մ./, որը «ծեփակերտված է» ոչ թե կրոնական «միամտությամբ, այլ ճշմարտության ու բարու կրքոտ ծարավով» /ընդգծ. իմն է,-Ս.Մ./: Գրականագետի ճշմարիտ ընկալումով, «այդ ծեփակերտությունը անտեսանելին չի նմանակում տեսանելիին /նման դեպքերում հենց այդպես էլ լինում է/, այլ, ասես թե, մի տեսանելին աշխատում է նմանակել մյուս տեսանելիին»[4] /իսկ տեսանելին՝ տեսանելիով,- իրականության փաստերի մեկնաբանության այս եղանակը դարձյալ հեթանոսական աշխարհընկալման կարևոր առանձնահատկություններից է,- Ս.Մ./: Ըստ հետազոտողի, «բանաստեղծի զրույցն աստծո հետ[5] որպես գեղագիտական փաստ, արդեն իսկ հանդգնություն է և

---

[2] Поэзия Армении. Редакция, вступительный очерк и примечания Валерия Брюсова. Ер., 1966, стр. 48.

[3] Տես նույն տեղը:

[4] Ստանիսլավ Ռասսադին, Պլյուս տասը դար: «Գարուն», 1970, N 9, էջ 79:

[5] Սա Աստծուն տեսնելն ու նրա հետ զրուցելն էլ է Նարեկացու հեթանոսականության արտահայտություններից մեկը: Ինչպես հայտնի է, ըստ կրոնական աստվածընկալման, հավատացյալը Աստծուն չի տեսնում և չի կարող տեսնել /«աստված» էլ նրանից քողարկվում է, ինչպես վարվում է, օրինակ, քրիստոնեական «աստվածը»/, հետևաբար, նրա հետ զրույցի բռնվելու մասին, այս դեպքում, խոսք անգամ գնալ չի կարող:

աստվածամարտության քայլ, եթե նույնիսկ այդ բանը չի նկատել և չի ցանկացել նկատել ինքը՝ բանաստեղծը»[6]: «Եկեղեցուն,- շարունակում է նա,- ձեռնտու չէր աստծո մոտեցումը մարդուն, եթե դա նույնիսկ արվում է գեղագիտական պլանով, չէ՞ որ դրանով խարխլվում են աստվածավախության հիմքերը: Միայն չճանաչված երևույթն է վախ ներշնչում: Աստծո վերաբերյալ միտքը /կրոնու՛մ,- Ա.Մ./ ծնվել է հենց որպես վախ այդ չճանաչված /և, թվում էր, անճանաչելի/ երևույթի հանդեպ: Բայց չճանաչելու ձգտումը, որի ընթացքում էլ ծնվել է արվեստը, հասցրեց այն բանին, որ արդեն աստծուն ևս տեղ էր հատկացվում ընբռնելի, ճանաչված աշխարհում: Դառնալով, այսպես ասած, պոեզիայի հերոս, աստված արդեն չէր ներշնչում այն վաղեմի ստորացուցիչ երկյուղը»[7]: Ռուս հետազոտողի կողմից «նրբորեն նկատված այս իրողություն-ները,- նույնպես նրբամտորեն նկատում է Վաչե Նալբանդյանը,- յուրովի օգնում են բացահայտելու «Ողբերգության մատյանի» որոշ գաղտնածալքերը, հասկա-նալու մարդու և աստծո բարդ «փոխհարաբերությունների գաղտնի զսպանակ-ները»[8]: Իսկ այդ «որոշ գաղտնածալքերը», մարդու և աստծո բարդ «փոխհա-րաբերությունների» գաղտնի զսպանակները»,- Նարեկացու համար մի պա՞ոզ գենետիկական հիշողության արձանագրում էր. նա «իր», իր ազգի ու ցեղի աստծուն էր տեսնում, որը նրան հարազատ, իրական ու զգայելի աստված էր /հետևաբար, նա նրա հետ զրույցի կարող էր բռնվել/, ո՛չ օտարոտին, անդրցանցականին, հետևաբար նաև՝ սարսափազդուին, վախ հարուցողին, հետը զրուցելու համար՝ անկարելիին: Ի դեպ, Նարեկացու աստծո, «նրա» և աստծո փոխհարաբերության այսպիսի մեկնաբանության համար ինքը՝ Նարե-կացին իր «Մատյանում» բավականաչափ հիմքեր տալիս է: Հիշենք, այս առու-մով, «Մատյանի» այն դրվագները, որոնցում Նարեկացին «իր» և Արարիչ-Աստծո յուրահատուկ, անձնական հարաբերությունն է ցուցանում: «Ինձ ժառանգակից անվանեցի քեզ», «հանդգնեցի կցորդվելու քեզ», ասում է նա դիմելով Արարչին /Բան Ե, Ա, 35[9], ընդգծ. իմն է,- Ա.Մ./: Մեկ այլ դրվագում, հայոց մեծ թաքնատեսը «իրեն» համարում է Արարչի «Աստված բոլորի»-ի «որդի», Արորդի /տե՛ս Բան ԽԵ, Ռ, 25, ինչպես նաև Բան ԽԸ, Բ, 35/, նկատի ունենալով «իր» որպես այդպիսին: Արմեն /ինչպես հայտնի է, մեր անունն է, որ նշանակում է արարչածին, Արարչի ստեղծածման-մարդ-մահկանացու,-Ա.Մ./ «որդեգրու-

---

[6] Ստանիսլավ Ռասսադին, հիշատ. տեղում, էջ 78:
[7] Նույն տեղը:
[8] Վաչե Նալբանդյան, Գրիգոր Նարեկացի, Եր., 1999, էջ 102:
[9] «Մատյանից» այս և ստորև մյուս մեջբերումները արվում են ըստ Սկրտիչ Խերանյանի թարգմանության /Տե ս Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Եր.,1960/.

թյան» փաստը /տե՛ս Բան Ծ,Դ,75, նաև՝ Բան ԼԵ, Ա,15/: Մեկ այլում Նարեկացին ասում է, որ «կարող ենք լինել մենք աստված նույնիսկ շնորհներով ընտիր» /Բան ԾԲ, Բ,55/: Եվ այլն:-Փաստորեն, Նարեկացու ոգու այս կրոնական ըմբռնումներից էապես տարբերվող խորը անձնականությամբ, արարչականությամբ, աստվածայնությամբ, յուրահատուկ ծագումի գիտակցմամբ դրոշմված ոսկեցոլքերը չեն վրիպել ռուս նարեկացիագետի ուշադրությունից: Նարեկացու «հավատքի շենքում /արտահայտությունը Նարեկացունն է/: Նա մեկ այլ կարևոր մաս էլ է նկատել: Ինչպես հայտնի է, Նարեկացին հանդիսացավ իրենից առաջ սկիզբ առած Թոնդրակյան ազգային հոգևոր շարժման շարունակող շարժում, որը վերստին արծարծող եկեղեցու կողմից երկար ժամանակ ժխտած հայ լինելիության, ծագումի, կենսագրության, Հայ-Հայի Աստված /Արարիչ/ հարաբերության, ամբողջական մարդկության մեջ՝ Հայի յուրահատուկ տեղի ու դերի նաև՝ եկեղեցու հայոց կյանքում կենսանպաստ դերակատարում չունենալու վերաբերյալ հարցերը: Սակայն ռուս նարեկացիագետը, զգալով Նարեկացու և Թոնդրակյան շարժման հոգևոր ժառանգական կապը, գրում է. «Ենթադրում են, թե Նարեկացին համակրել է այն ժամանակվա հերետիկոսակա[10] ուսմունքներից մեկին[11]: Բայց այստեղ ավելի կարևոր է մեկ այլ բան. այն, որ նա կանգնած է եղել արվեստի բնական ու անխուսափելիորեն «հերետիկոսական» ակունքների մոտ, արվեստ, որն իր բնույթով մարդկայնացնում , անձնավորում էր ամբողջ աշխարհը և նույնիսկ աստծուն»[12]:Ռուս նարեկացիագետը որքա~ն է արդարամիտ, ի տարբերություն այն հայ նարեկացիագետների, որոնք հայ եկեղեցու /և ընդհանրապես՝ կրոնի/ սարսափն իրենց մեջ տակավին ունենալով աշխատում են Նարեկացուն «չոր» դուրս բերել Թոնդրակյան բարեբեր շարժման ազդեցությունից...[13]

Մեկ այլ ռուս ժամանակակից նարեկացիագետ՝ գրող-գրականագետ Միխայիլ Դուդինը ևս Նարեկացուն համարում է ո՛չ կրոնական կարգի գրող. այլ՝ «Ճշմարտության էությանը ձգտող բանաստեղծ», որի ստեղծագործության մեջ, «...նույնիսկ կրոնական անխախտ դոգմաները, տարբեր կողմերից իմաստա-

---

[10] Գրականության մեջ «հերետիկոսության» տակ, սովորաբար, հասկացվում է միջնադարում կրոնականներին զուգահեռ գոյություն ունեցող հավատքային ուղղությունները, այսինքն, փաստորեն, միջնադարյան հերետիկոսությունները ազգային հավատքը ելակետ համարող հոգևոր ուղղությունները:

[11] Անշուշտ հաշվի է առնվում Թոնդրակյան «ուսմունք»-ը:

[12] Ստանիսլավ Ռասսադին, վերը հիշատակված տեղում, էջ 79:

[13] Սոիթի բերումով, ասենք, որ Նարեկացու եկեղեցու հանդեպ վերաբերմունքը թոնդրակեցիների պես բացահայտ թշնամական չէր: Բայց այն ավելի խորն, ավելի սթափ, ու ...ավելի հայեցի էր...

վորվելով հանճարի քննախույզ բանականությամբ, օրինականացված քարացածությունից վեր են ածվում ելք փնտրող մտքի կենդանի տրոփյունի»[14] /ընդգծ. իմն է,- Ս.Մ./: Իսկ ճշմարտության վերծանման մղումը, բանականության պաշտամունքը,- ասվածը մեկնաբանենք ըստ մեր հարցադրման,- հեթանոսականության հատկանշական գծերից է /հիշենք հին հունա-հեթանոսական բանականության, ճշմարտության պաշտամունքը[15], որը...Հունաստան կրոնների թափանցումով թուլացավ, գրեթե ի չիք դարձավ.../, գիծ, որը խավարասեր կրոնական միջնադարում մեզանում եզակի պահպանողներից է Նարեկացին, որը և Մ.Դուդինը, »դրսի» հայացք ունենալով հանդերձ, նկատում է:

Ռուս ժամանակակից գրականագետ-գրող Ալ.Դեյչը նույնպես գտնում է, որ Նարեկացու երկերում Աստծո և մարդու, աստծո և մարդու կապի, մյուս մարդու հաճո խորհուրդների ըմբռնումը իր էությամբ վցաղնջական հեթանոսական ըմբռնումն է, և ո՛չ կրոնական. «Նարեկացու պոեզիայում,- գրում է նա հիշատակված խորհուրդներից մեկի նարեկացիական ընբռնումն մեկնաբանելով,- աստվածանինի ու մարդկայինի փոխադարձ կապը կորցրել է իր աստվածաբանական բնույթը»[16]: Մեր կողմից, սակայն, նկատենք հետևյալը: Քանի որ մինչ այժմ կրոնները սեփականաշնորհել են աստվածաբանականաի ոլորտը /դրանից հեռու լինելով, և հասարակական գիտակցության մեջ հետևողականորեն մտցրել են այն թյուր պատկերացումը, որ այդ ոլորտը իրենց մենաշնորհն է,- «աստվածաբանականաի» հարցին, հետևաբար, ըստ այդ սովորութային հարացույցով մոտեցող խորհրդային աստվածամերժ գիտնականաը պետք է որ կարծեր, թե «աստվածաբանականաը» հույժ վտանգավոր է Նարեկացու պես հանճարի համար, և պետք է աշխատենք նրան ազատել այդ անցանկալիից: Ճշմարտությունը, սակայն, այն է, որ Նարեկացու երկերում կրոնական իմաստով «աստվածաբանականն» է /որն, ըստ էության, լինելով մարդակենտրոն աշխարհայեցողություն, արարչամերժություն ու աստվածամերժություն[17] է/ , որ բացակայում է /այս առումով Ալ. Դեյչը իրավացի է/, այն դեպքում, երբ դրանցում բուն հեթանոսական իմաստով «աստվածաբանականը» ծայրե ի ծայր է /սա տեսնելու համար գրականագետի միամտությունը թույլ չի տվել.../. Հայ

---

[14] Միխայիլ Դուդին, «Ճշմարտության որոնման տառապանքը»: «Գրական թերթ», 1978 թ., 3-ը մարտի:

[15] Ավա–ղ, Ցի Հայաստանից այդպիսի <u>բազահայտ</u> պաշտամունքի օրինակ չենք կարող բերել...

Александр Дейч Поэзия скорби и гнева В кн Читая Нарекаци Ер 1974 стр. 30

[17] Հիշենք, այս առումով, «Մատյանի» այն դրվագը, որտեղ Նարեկացին Պողոս առաքյալին. հեթանոսների» մեջ Հիսուսի ուսմունքի գլխավոր տարածողին, ի թիկս այլոց, մեղադրում է «Արարչի սպանման «մասնակից» լինելու մեջ.«որհանցանքների ամենեն անքավելին է» /Բան ԺԱ, Բ, 70/:

հանճարը բոլոր ժամանակների մեծագույն արարչապաշտներից ու աստվածապաշտներից է:

Նարեկացին իր երկերով որպես հեթանոսականը վերածնող ականավոր հոգևոր այր,-ռուս գրականագետ-գրողների տեսակետները կիսում է դարասկզբի ֆրանսիացի գրող ու արվեստաբան Գաբրիել Մուրեն: Նա Ֆրանսերեն լույս տեսած «Հայ բանաստեղծություններ»-ի առաջաբանում գրել է. Նարեկացին «...ունի նաև պաշտելի հոգեզմայլությամբ համակված տաղեր, որոնց մեջ կարծես սահելով անցնում է հանգած հեթանոսության արձագանքը... Արդյոք Վեներայի՞, թե՞ ս.Կույսի[18] կերպարանքն է, որ վանականի մթին խցի մեջ սփռում է այն թարմ ցոլքերն ու բույրերը, որոնք մտաբերել են տալիս Բոտիչելիի «Գարունը»[19] /ընդգծ. իմն է.- Ս.Մ./,- միտք, որը հետազոտողի համար կողմնորոշիչ դերակատարում կարող է ունենալ Նարեկացու երկերում այլ հեթանոսական «Գարուն»-ներ էլ հայտնաբերելու համար:

Այլազգի նարեկացիագետները պատկերացրած Նարեկացու հեթանոսական ներկայացման այս շարքը կարելի է ընդլայնել: Բայց բավարարվենք բերածով: արդեն իսկ դա համոզում է, որ ճշմարիտ է հայ նարեկացիագիտության այն թևը, ըստ որի Նարեկացին, ինչպես նշում է այդ թևի ներկայացուցչներից մեկը Շանթը «հեթանոսական դեմք մըն է»,[20] որ նա ճիշտ է, համամարդկային կարգի մեծություն է, բայց այդպիսին է մեծ հայ լինելով, համաբովանդակ ու համասփյուռ հայ-ազգայինը /հեթանոսականը/ իրենում խտացնելով – կիզակետում իմի բերելով, այն ոգեղենացված ձևով արտահայտելով, ի տես ու ի օրինակ թե իրենցոքինների, թե այլոց համար: Սա ի դեմս Նարեկացու տեսնում ու ասում է, կրկին անգամ ընդգծենք, այլազգի նարեկացիագետը իր «դրսի» աչքով ու մտքով:

---

[18] Քանի որ Նարեկացին հայ, հայ մշակույթի ու պատմության ծնունդ է,- այստեղ ավելի ճիշտ կլիներ ասել Աստղիկն է կամ Անահիտը...
[19] Մեջբերումն ըստ Վ.Նալբանդյանի վերը հիշատակված աշխատության, էջ 66/:
[20] Լ.Շանթ, Երկեր, հ. 18, Պեյրութ, 1946, էջ 114: